

Ընդհանուր դրույթներ

1. Միջազգային փոխանցումներն իրականացվում են Բանկի բոլոր մասնաճյուղերում:
2. Բանկը միջազգային փոխանցումներն իրականացնում է անկանխիկ եղանակով գործարքի կատարման արժույթին համապատասխան բանկային հաշվով:
3. Յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ժամը 15:30 ներկայացված վճարման հանձնարարականները կամ ստացված միջազգային փոխանցումների հաշվեգրումները Ֆասթ Բանկի կողմից կատարվում են նույն բանկային օրը, իսկ ժամը 15:30-ից հետո ներկայացված վճարման հանձնարարականները կամ ստացված միջազգային փոխանցումների հաշվեգրումները՝ հաջորդ բանկային օրը:
4. Փոխանցման նվազագույն և առավելագույն սահմանաչափեր սահմանված չեն:
5. Միջազգային փոխանցումների իրականացման ժամանակ թղթակից բանկի ընտրությունը կամ փոփոխությունը կատարվում է Բանկի կողմից ինքնուրույն առանց հաճախորդին տեղյակ պահելու՝ առաջնորդվելով Բանկի հետ համագործակցող բանկերի ցանկով:
6. Բանկը միջազգային փոխանցումները իրականացնում է 3 տարբերակով փոխանցման եղանակով՝ OUR, GOUR, BEN:
 - OUR տարբերակի եղանակի դեպքում թղթակից բանկի ծախսերը կրում է Բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից:
 - GOUR տարբերակի եղանակի դեպքում թղթակից և առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է Բանկը՝ գումարն ամբողջությամբ (առանց նվազեցումների) փոխանցելով ստացողին:
 - BEN տարբերակի եղանակի դեպքում թղթակից և առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից:
7. Միջազգային փոխանցումների համար սահմանված երկրների ցանկին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):
8. Բանկն իրավունք ունի փոխանցման կատարումը մերժել փոխանցումը, եթե վերջինս չի համապատասխանում իր կամ թղթակցի ներքին իրավական ակտերին կամ միջազգային օրենսդրության պահանջներին, ինչպես նաև Բանկը պատասխանատվություն չի կրում թղթակից բանկերի կամ միջնորդ բանկերի կողմից գործարքը մերժելու, կասեցնելու կամ սառեցնելու, սանկցիաների կիրառման պատճառով գումարը շահառուի բանկային հաշվին չկրեդիտագրելու կամ կրեդիտագրման ժամկետների համար:

9. Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից տրված թերի կամ սխալ տվյալներով հանձնարարականների հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար, ինչպես նաև չեղյալացման չեղարկման, թղթակից կամ միջնորդ բանկերի կողմից գործարքների մերժման արդյունքում առաջացած լրացուցիչ ծախսերի (պահումների) համար:
10. Միջազգային փոխանցման չեղյալականացման չեղարկման, թղթակից բանկի կողմից հայտի մերժման համար Բանկին վճարված միջնորդավճարը ենթակա չէ հետ վերադարձման, այդ թվում թղթակից բանկի կողմից հայտի մերժման դեպքում: Եթե փոխանցումը չեղյալացվել չեղարկվել է մինչև Բանկի կողմից կատարելը, հաճախորդին վերադարձվում է նաև փոխանցման կատարման համար գանձված միջնորդավճարը, իսկ փոխանցման միջոցների վերադարձը իրականացվում է նույն բանկային օրը:
11. Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար: Փոխանցված միջոցները շահառուի կողմից չստանալու դեպքում փոխանցված դրամական միջոցների հետ վերադարձման համար Բանկը պատասխանատվություն չի կրում: Այն դեպքում, երբ գումարը դեռ չի կրեդիտագրվել շահառուի հաշվին և հաճախորդը դիմել է Բանկին գործարքը չեղյալ համարելու համար, տվյալ դեպքում ապա գործում են փոխանցումը չեղյալ համարելու կանոնները:
12. Փոխանցումների տվյալների փոփոխության և գործարքը չեղյալ համարելու վերաբերյալ ստացված դիմումներին Բանկի կողմից ընթացք է տրվում առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում: